

ՄԱՐՏՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԿՅԱՆՔԸ ԵՎ ՄԵՆՔԸ

*Կյանքը թուլամիտի ծիծաղն է մթուռյան մեջ:*

*Թորնթոն Ուայլդեր*

ԵՐԵՎԱՆ



2017

ՀՏԴ 821.19-1Հովհաննիսյան  
ԳՄԴ 84(5Հ)-5  
Հ 854

Շեղինակը շնորհակալություն է հայտնում ԵՊՇ Տնտեսագիտության  
և կառավարման ֆակուլտետի դեկան տ.գ.դ. պրոֆեսոր  
Շայկ Սարգսյանին գրական խորհրդատվության համար:

## **Գիրքը նվիրում եմ ընտանիքիս**

Հովհաննիսյան Մարտուն  
Հ 854 Կյանքը և մենք: Բանաստեղծություններ/Մ. Հովհաննիս-  
յան.- Եր.: Արմավ, 2017.- 84 էջ:

ՀՏԴ 821.19-1Հովհաննիսյան  
ԳՄԴ 84(5Հ)-5

ISBN 978-9939-863-50-4

© Հովհաննիսյան Մարտուն, 2017  
© Արմավ հրատարակչություն, 2017

\*\*\*

Մենք սկսում ենք քայքայվել ներսից,  
Երբ դադարում ենք մանկան պես լացել:  
Մենք դադարում ենք տանջվել հույսից,  
Երբ սովորում ենք ցավի հետ ապրել:

\*\*\*

Ինձ պետք է, որ երգս լսես,  
Եվ պետք չէ ոչինչ առավել,  
Ինձ պետք է՝ անցածը հիշես.  
Որքան եմ քեզնով ես գերվել:  
Ժամն է, հառաչս լսես ու ասես,  
Զգիտեմ՝ իսկ դու սիրել ես, թե ոչ,  
Կամ գուցե Շրոդինգերի կատվի պես  
Սիրել ես ինձ, բայց նաև՝ ոչ:

\*\*\*

Որդիս, նոր եմ քեզ կյանք ուղարկում,  
 Թող իմ խոսքերը քեզ ապավեն լինեն:  
 Ժամանակն է, որ կյանքը տեսնես արդեն:  
 Առաջինը, որ պետք է ասեմ քեզ,  
 Երբեք հույսդ չկտրես Աստուծուց:  
 Պահիր նրան, և նա կպահպանի քեզ,  
 Սա առաջինն է, որ խնդրում եմ իմ որդուց:  
 Որդիս, սերդ դու չշռայլես,  
 Առաջինը քեզ պետք է սիրես,  
 Չպետք է պաշտես օտարին, աստվածարես,  
 Իգուր չէ՛ Տերն ասել՝ քեզ համար կուտքեր չլինես:  
 Ընկերությունը, որդիս, սուրբ պիտի պահես,  
 Ընկերոջդ համար անձդ մոռացիր,  
 Ընկերոջդ սիրիք սեփական անձիդ պես,  
 Հացի վերջին կտորը նրա հետ կիսիր:  
 Եղբորդ վրա երբեք չբարկանաս,  
 Արյունը երբեք ջուր չդարձնես,  
 Ժամանակն է, որ դու հասկանաս,  
 Որ անխոհեմ եղբորդ ներող պետք է լինես:  
 Թշնամուդ ներիր, բայց ցույց մի՛ տուր, որ ներել ես,  
 Միշտ միտքդ կպահես արթուն,  
 Չարին չընդդիմանալը նոր չարիք է ծնում,  
 Թշնամուդ համար աղոթիր քո Աստծուն:  
 Կյանքը դաժան պայքար է, որդիս,  
 Բայց երբեք դաժան չլինես,  
 Կյանքը վազք է, որդիս,  
 Վազիր, ինչքան ուժ ունես,  
 Բայց և չշտապես:  
 Սիրտդ դառնությամբ, որդիս, չմաշես:  
 Կյանքը գեղեցիկ է, միայն գիտենաս՝ ուր նայես,  
 Երբեք չդադարես երազելուց,  
 Ուր էլ որ լինես, ինչ օր էլ ապրես:  
 Որդիս, նոր եմ քեզ կյանք ուղարկում,  
 Թող իմ խոսքերը քեզ ապավեն լինեն,  
 Ժամանակն է, որ կյանքը տեսնես արդեն:

\*\*\*

Սերը վառ կրակ է,  
Որ ջերմացնում է, ձանապարհի լուսացնում,  
Նաև սերն այդ դժոխքի կրակ է,  
Այրում, ամեն ինչ մոխիր է դարձնում.  
Կարող է գլխիդ արևը մարել,  
Աշխարհը անստվեր եղեն դարձնել,  
Բոպեն՝ երանության մի դար,  
Ալեքսիս սիրտը պահել աննկուն,  
Պահապան լինել մթին աշխարհում,  
Երկու անգամ չի ընծայվում սերը,  
Տերը շոպլ չէ այդ հարցում,  
Յոթ անգամ անտեսում, մի անգամ է տրվում,  
Առանց սեր հնարավոր է կյանքը, բայց  
Նսեմանում է կյանքի իմաստը...

\*\*\*

Երբ քեզ առաջին անգամ տեսա,  
Թվաց, թե դրախտի մուտքին եմ կանգնած,  
Թվաց, թե նոր գույն հորինեց Աստված,  
Հասկացա՝ հավերժ մի բան կա այս կյանքում.  
Քո սերն է, որը ինձ երբեք չի լքում ...

\*\*\*

Աշխարհի ստեղծման օրերից ցայսօր,  
Ընթանալով տասնյակ դարերի բովում,  
Մենք՝ հայերս, շատ բան ենք տեսել՝  
Վիշտ, վերք, կոտորած, բայց  
Մեր մեջ հույսը երբեք չի մարել:  
Մենք հավատով Աստծուն ենք հասել,  
Խաչքարեր ծաղկել, տաճարներ կերտել,  
Առաջինը մենք ենք Տիրոջն ընդունել,  
Մենք Նարեկացի ենք ունեցել, որից արդեն տասը դար է  
անցել,

8

Բայց մինչ հիմա հանելուկ է մնացել,  
Ունեցել ենք սպարապետներ անխոց՝  
Կյանքը տված հողին հայոց,  
Ունեցել ենք մեծ երգիչներ՝ լեզվով հրբոց,  
Խոսք կտակած երկրին հայոց՝  
Համբարձումյան, Խաչատրյան,  
Փարաջանով, Մարտիրոս Սարյան,  
Հայերս գիտենք ցավը տանել անձայն,  
Գիտենք սուրբ հողը պահել...  
Զգիտենք արդարին վնասել,  
Մագաղաթներ այրել, օտարի տունը քանդել,  
Մենք գիտենք քարին հոգի տալ  
Ու գրչով մերկ սրին հաղթել:  
Մեզ համար հանգիստ չի եղել կյանքը,  
Բայց ապավեն են եղել գրիչը, բրիչը, խաչը,  
Գիտեն՝ նորից ենք Տիգրան ունենալու,  
Մասիսը գերությունից հետ է դառնալու:  
Անարդար աշխարհ, ինչ էլ որ անես,  
Եղել ենք, կանք ու միշտ կլինենք ...



\*\*\*

Գիտե՞ք՝ ինչ ահավոր է իրականությունը չընկալել,  
Ձհասկանալ, թե ինչպես է գարունը ծաղկում,  
Ջիմանալ, թե ինչպես են սիրում ու ատում,  
Կյանքեր նվիրում, խոսքեր ընծայում,  
Իսկ ի՞նչ ասել է իրականություն,  
Գուցե իրականությունը լրիվ այլ բան է,  
Գուցե զոհը գայլն է և ոչ թե ոչխարը,  
Գուցե մեղավորը Տերն է, ոչ թե աշխարհը,  
Գուցե իրականությունը մատրից է,  
Գուցե իրականում կտրը ուղիղ գիծ է,  
Գուցե մենք ամեն ինչ սխալ ենք հասկացել.  
Ոչ ոք դա չի կարող ասել ...

\*\*\*

Գիտե՞ք՝ ինչ է տնտեսագետ լինելը,  
Տնտեսագետը կարող է անժխտելին ժխտել,  
Ռոբոտը դաշնամուրի հետ համեմատել,  
Վաղանցիկ վերելքով չխաբվել,  
Գալիք ձգնաժամի հոտը առնել,  
Շահույթի համար նվիրվել գործին,  
Փնովել Մարքսին, մեծարել Քեյնսին,  
Նա ամենից լավ կարող է  
Հայերիս ամենասիրած գործը անել՝  
Ուրիշի փողը հաշվել,  
Կարող է նաև ամուսնանալ հաշվարկով,  
Ընկերուհուն վարկով նվեր առնել,  
Կարող է նաև ծայրահեղ լինել,  
Մանիֆեստ գրել, ազգեր կործանել,  
Կարող է ռուբլին թղթից էժան սարքել,  
Դոլարը մարդկանց թագավոր կարգել,  
Տնտեսագետը եկեղեցում մոմ չի վառի,  
Բա էդքան ձարալը ու՞ր գնա կորչի:  
Տնտեսագետը մտածում է մի բան,  
Ասում ուրիշ բան,  
Անում է այլ բան ...

\*\*\*

Ինչքան ժամանակ է՝  
 Հայելու մեջ չեմ կարողանում նայել,  
 Զգիտեմ՝ ինչու, ինչ պատճառով:  
 Ըստ իս՝ մեղք չեմ գործել ահավոր.  
 Ո՛չ սիրտ եմ տրորել, փշրել,  
 Ո՛չ էլ ուրիշի մոտ գաղտնյաց գաղտնիքն եմ բաց արել կարևոր:  
 Հայելուն, ինչքան ժամանակ է, չեմ կարողանում նայել,  
 Կարծես հոգուս չարն է հայել,  
 Ինչպես կորուսյալ հոգուն է վայել,  
 Երևի թե այն ամոթն է ինձ պարուրել,  
 Որ անկարելիի սահմանն եմ անցել,  
 Անկարելիորեն մոռացել եմ ատել,  
 Անկարելիորեն սև հայելուն եմ սիրահարվել:  
 Ուղղակի ես նրանցից չեմ,  
 Որ հայելու մեջ պայծառափայլություն եմ տեսնում,  
 Անաղարտություն,  
 Բայց իրենց հոգուց ոչինչ էլ չեմ տեսնում.  
 Ոչ թե աչքերի խորքն եմ նայում,  
 Այլ ուղղակի ակնախնձորներին  
 Ու հիանում աչքերի բացվածքի մեծությամբ կամ փոքրությամբ  
 Ովքեր իրենց կիսաստված-կիսաստվածուհի եմ կարծում:  
 Թ՛վում է՝ ոչ մի խելոք պատճառ չկա չնայելու  
 Կամ գուցե ինձ խանգարում է պատրանքը հայելու,  
 Որ խոսում ես՝  
 Դիմացը կանգնած՝  
 Զայն չի հանում,  
 Լուռ ու մունջ է իրեն պահում,  
 Աջ ձեռքդ հանես, ձախն է հանում,  
 Հայելին թերանում է, ու ոչ միայն մի բանում:  
 Էլ ինչպես հայել հայելուն...

\*\*\*

Բարև ձեզ, ես գրքամոլ եմ.  
Ինչ կարող եմ պատմել գրքերից:  
Գրքերը տվեցին իմաստ իմ կյանքին,  
Գրքերն ինձ իմաստություն պարզեցին,  
Ես դեռ չեմ տեսել աշխարհը և մարդկանց,  
Բայց գրքերում խմել եմ գինի,  
Տեսել եմ աղջիկների պարը նազանի,  
Տեսել եմ, թե ինչպես են հայր սպանում  
Մի քանի քոռ կոպեկի համար,  
Տեսել եմ, թե ինչպես է Հայրը իր միածին որդուն զոհում  
Բոլորիս փրկության համար:  
Տեսել եմ, թե ինչպես են հավատը կորցնում  
Ու հավերժ գնում կործանվում,  
Տեսել եմ, թե ինչպես են սիրուց թույն խմում,  
Թե ինչպես է ի վերջո սերը թույն դառնում,  
Տեսել եմ, թե ինչպես է  
Արևն իր ծիրանագույն ոսկով երկինքը ողողում,  
Լսել եմ սիրենների երգը քաղցրահունչ,  
Տեսել եմ կոտորածը՝ անտերունչ ազգի,  
Լսել եմ հարցերը թագաժառանգի,  
Որ ցանկանում էր հասկանալ մահը,  
Տեսել եմ մահը անհույս սիրահարի,  
Մեկ ուրիշ տեղ՝ խնդիրը հացի,  
Դեմքը լուռ լացի,  
Գրքերում ես գահավիժում էի անտակ անդունդների,  
Ուսանում, քարոզում դատարկ կրոններ,  
Ողջ թագավորություններ նվաճում:  
Այն, ինչ գրքերում տեսա, մարդիկ ապրել են  
Ու ապրելու են դեռ:  
Գրքերից այսքանը.  
Ինչքան հասկացաք, գրքամոլ լինելը վատ չէ այնքան էլ ...

\*\*\*

Տէր իմ, ներիր իմ մեղքերը,  
 Տէր իմ, բուժիր հոգուս վերքերը,  
 Տէր, ինձ մի մոռացիր, երբ քեզ մոռացել եմ,  
 Ճանապարհ ցոյց տուր ինձ, ես ձամփաս կորցրել եմ:  
 Տէր իմ, ուժ տուր ինձ դիմանալ կյանքին,  
 Տէր իմ, սէր տուր ինձ, որ սիրեմ մեկին,  
 Ով կհասկանա ու սերս չի հեզմի,  
 Ով սերը չի վերածի ստի,  
 Ով սերը չի խաղում,  
 Ով կեղծ չի նազում,  
 Տէր իմ, փրկիր մեզ կեղծ ընկերոջից,  
 Որն առաջին հնարավոր դեպքում  
 Ինձ էլ կծախի, քեզ էլ,  
 Տէր իմ, պահպանիր մեզ սիրողներին,  
 Մեզ սիրելով՝ նրանք սիրում են քեզ էլ,  
 Փրկիր և քեզ ուրացողներին,  
 Քեզ ատողներին, անարգողներին,  
 Հպարտներին ու անխոհեմներին ...  
 Փրկիր մեզ,  
 Ամեն...

\*\*\*

Ի՞նչ ասել է թե՛ առաջին սեր.  
Գուցե դա այն է, երբ պահմտոցու ժամանակ  
Համբույր ես գողացել,  
Գուցե դա այն է, երբ մեծերի մոտ դրանից խոսելիս  
Վարդի պես ես շիկնել,  
Կարծես թե աշխարհի ամենաամոթալի բանն ես լսել:  
Առաջին սերը այն չէ՞, երբ չես իմացել ինչեր երագել,  
Գողացած համբույրիկից այն կողմ բան էլ չես տեսել,  
Առաջին սիրուդ ժամանակ  
Անմտության աստիճան միամիտ չէ՞ս եղել,  
Բայց, Օ, աստվածներ, առաջին սերդ  
Այն ժամանակ էլ սիրուց այնքան բան է հասկացել, այնքան,  
Որ մինչև խորը ծերություն չես հասկանա այդքան:  
Կամ գուցե առաջին սեր գոյություն չունի.  
Կա միայն վերջին սեր,  
Ու դու մնացածների մեջ այդ առաջին սիրուդ ես տեսել,  
Այո՛, գուցե հենց այդպես է,  
Համարձակվում եմ ասել:

\*\*\*

Դու...

Դու՝ արթմնի երագ, դու՝ լուսե տեսիլք,  
Դու՝ անմեկին գրվածք, դու հնայիլ-գիրք,  
Դու՝ անզգա ու զգացմունքային,  
Դու՝ ընծա անգին, դու՝ իմ սեր վերջին,  
Դու՝ սիրո տաղ, դու՝ եղեմական բաղ,  
Դու աննման, անանուն,  
Դու՝ ձմռանս ծաղկած գարուն ...

\*\*\*

Լավ է, երբ սերը չի հասցնում մեռած երգ դառնալ,  
Երբ կյանքը չի հասցնում վրադ դատարկ,  
Բայց ծանր բեռ բառնալ:

Զքնաղ է այն պահը,  
Երբ ներկան դեռ չի հասցրել անցյալ դառնալ.  
Մի պահ կանգ է առել  
(Սիրու՛դ ես էլի տեսել).

Լավն է լույսը լուսնի, մինչև չես հոգնել  
(Արևից՝ չէ, բայց լուսնից հոգնում եմ,  
Սիրուց՝ չէ, բայց alla սիրուց հոգնում եմ)

«Ես քեզ սիրում եմ»-ը լավ է,  
Քանի դեռ «ես քեզ չգիտեմ էլ ինչ եմ անում» չի դարձել,  
Ռոմանտիկան լավ է, քանի դեռ աբսուրդ չի դարձել,  
Հույսը օրհնված է, քանի դեռ իրեն չի պատռտել, վառել, մարել,  
Անձրևը լավ է, քանի դեռ չի դարձել կարկուտ,  
Սերը հրաշք է, քանի դեռ չի դարձել ձահձուտ...



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մենք սկսում ենք քայքայվել ներսից . . . . .	3
Ինձ պետք է, որ երգս լսես . . . . .	4
Որդիս, նոր եմ քեզ կյանք ուղարկում . . . . .	5
Սերը վառ կրակ է . . . . .	6
Երբ քեզ առաջին անգամ տեսա . . . . .	7
Աշխարհի ստեղծման օրերից ցայսօր . . . . .	8
Գիտե՞ք՝ ինչ ահավոր է իրականությունը չընկալել . . . . .	9
Գիտե՞ք՝ ինչ է տնտեսագետ լինելը . . . . .	10
Ինչքան ժամանակ է . . . . .	11
Բարև ձեզ, ես գրքամոլ եմ . . . . .	12
Տե՛ր իմ, ներհր իմ մեղքերը . . . . .	13
Ի՞նչ ասել է թե՛ առաջին սեր . . . . .	14
Դու... . . . .	15
Լավ է, երբ սերը չի հասցնում մեռած երգ դառնալ . . . . .	16
Հաշիվը խառնել եմ, թե ինչքան եմ երազել . . . . .	17
Դու կյանքս փոխիր . . . . .	18
Մնաս բարով, սե՛ր իմ ուրախ . . . . .	19
Ի՞նչ ենք մենք դառնում . . . . .	20
Պատահաբար չեմ պատահում կյանքում . . . . .	21
Որդիս, կյանքումդ երբեք ու երբեք հույսդ չկորցնես . . . . .	22
Ադոթենք նրանց համար . . . . .	23
Պետք է պաշտել Սերը, աստվածացնել . . . . .	24
Ես չեմ ավոսում, որ քեզ սիրել եմ . . . . .	25
Ոչինչ բացարձակ չի լինում . . . . .	26
Ինչպես արևը չիլիին կծվություն է տալիս . . . . .	27
Այո՛, սիրվելուց էլ եմ ատում . . . . .	28
Ես շատ զգայուն եմ դարձել . . . . .	29
Ում դու սիրում ես, կան կմեռնի, կան ի վերջո քեզ կլքի . . . . .	30
Մոնթե, լույս իջնի շիրիմիդ . . . . .	31
Միայն դժբախտը գիտե, թե երջանկությունն ինչ է . . . . .	32
Կյանքի իմաստն այն է, որ իմաստ չունի այն . . . . .	33
Եղբայր իմ, ձիշտ նայիր ներկային . . . . .	34
Քո աչքերը կրքի լուրթ լծակներ են . . . . .	36
Վերջանում եմ սողերը . . . . .	37
Ինչ կերտվածք էլ մարդը ունենա . . . . .	38
Դու չգիտես՝ ինչ ես կորցնում . . . . .	39
Քո ձեռը ես կկործանվեմ . . . . .	40

Առաջ ես պատրաստ էի քեզ համար մեռնել . . . . .	41
Ու՞մ է պետք այս ներկայացումը . . . . .	42
Երբ առաջին անգամ համալսարան էի գալու . . . . .	43
Ես չեմ հասկանում, թե ինչ է կատարվում . . . . .	44
Ասա՛ ինձ, հայելի՛, ո՞վ է ամենանվիրվածը . . . . .	45
Մի ատեք անխոհեմներին, չարախոսներին . . . . .	46
Ինչ-որ բան, գիտեմ, սխալ եմ անում . . . . .	47
Դու իմ կյանքին իմաստ ես տալիս . . . . .	48
Ես լսում եմ քո ձայնը աշխարհի բոլոր աղմուկներում . . . . .	49
Երեք տասնամյակ էլ դեռ չապրած . . . . .	50
<i>Հայր մեր, որ յերկինս ես . . . . .</i>	52
Ինչ տգեղ ու գեղեցիկ է կյանքի հեզմանքը . . . . .	53
Չարը ավելի ահավոր է . . . . .	54
Այնքան ձանձրալի է առանց ուժգին սիրո . . . . .	55
Ի՞նչ անել ... թողնել հեռանալ . . . . .	56
Սերդ՝ սպանդանոց-տարտարոս . . . . .	57
Շատերը կողքովս եկան ու անցան . . . . .	58
Ու՞ր եմ քո թերությունները . . . . .	59
Բոլորն ապրելու իրավունք ունեն . . . . .	60
Նա դեռ ջահել է, նա չի հասկանում . . . . .	61
Հայի աչքեր ... . . . . .	62
Եթե եկվորները հանկարծ մեզ հյուր գային . . . . .	64
Քո կեսություն, կեսկատակ հայացքը կույ տալով . . . . .	65
Երազանքի լավագույնը փշրվածն է . . . . .	66
Վերջին անգամ ուզում եմ մտածել . . . . .	68
Եկեք մոռանանք, որ աշխարհը ծուռ է . . . . .	69
Ինչպե՞ս կարելի է նայել թե՛ արևոտ, թե՛ աստղած երկնքին . . . . .	70
Արդե՞ն ուշ է ինչ-որ բան փոխել . . . . .	71
Հիմա կամ երբեք, էլ չեմ սպասելու . . . . .	72
Ո՞րն է չափն անցնելը . . . . .	73
Հեռավորությունը ոչինչ է, իրոք . . . . .	74
Ես առաջվանն եմ, ոչինչ չի փոխվել . . . . .	75
Մենակ ես գիտեմ, թե ինչ է սերը . . . . .	76
Օրերը մեր կիսատ են մնացել . . . . .	77
Ես մեղավոր չեմ, որ զարմացած եք . . . . .	78
Դուք նայում եք ընկնող աստղին . . . . .	79
Օրերը հավում . . . . .	80

# ՄԱՐՏՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՄԵՆՔ

## МАРТУН ОГАННИСЯН ЖИЗНЬ И МЫ

Խմբագիրներ՝ Անդրանիկ Կարապետյան  
Ռոզա Հովհաննիսյան  
Ձևավորումը՝ Արմինե Քոչարյանի  
Համակարգչային շարվածքը՝ Նունե Նիկողոսյանի

Չափսը՝ 60x84 1/16  
Թուղթը՝ օֆսեթ 80գ/մ<sup>2</sup>  
Ծավալը՝ 5.25 տպ. մասնով  
Տառատեսակը՝ Ghabuzian Gohar  
Տպաքանակը՝ 300  
Գինը՝ պայմանագրային

Տպագրվել է «Նովել հրատարակչություն» ՍՊԸ տպագրատանը  
Հասցե՝ Ք. Երևան, Մալխի 9 փ., 23



ИЗДАТЕЛЬСТВО АРМАВ

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 բն.  
հեռ.՝ 34-73-35  
Էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru

Г. Ереван, ул. Шираза 24 д. 48 кв.  
тел.՝ +374-10-34-73-35  
Email: armav-hrat@mail.ru

Հեղինակի ֆեյսբուքյան հասցեն՝ [www.facebook.com/hovhannisyanmartun](http://www.facebook.com/hovhannisyanmartun)